առաւել քան զայլազգիսն դառնացուցին և տագնապեցին զեղկելիսն զայնոսիկ, կամեցեալ բռնադրօսել զդարաւոր զիրաւունս նոցա. որպէս յայտ առնէն զայս ամենայն զանազան հրովարտակք Սուլթանացն Եգիպտոսի և դատաստանական գրեանք, գրեալ 'ի բարբառ Արաբացւոց, թէպէտ բազումք 'ի նոցանէ բարձեալ 'ի միջոյ, և ոմանք եւս եղծեալ և պակասեալ, այլ զոր միանգամ գտաք անթերի յարկեալս գրոց Ս. Աթոռոյս, զնոսին և եթ դնեմք 'ի կարգի պատմութեանս։

Զկնի ժողովոցն, որք գումարեցան 'ի Սիս և յԱտանա յաւուրս Կաթուղիկոսութեանց Գրիգորի Անաւարզեցւոյ և Կոստանդեայ, Լեւոնի և Օշնի արքայից (1307—1316) յաղագս փոփոխութեան ծիսից եկեղեցւոյն Հայոց, զոր բազումք 'ի Հարց արեւելից ոչ ընկալան զժողովն և զսահմանս նորա։ Իսկ Սարգիս եպիսկոպոս Երուսաղէմի՝ մերժեալ իսպառ զհրաման Օշնի արքային և Կոստանդեայ Կաթուղիկոսի, արգել զիւրան 'ի նոցանէ, և յինքն յանկուցեալ զոմանս յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց, էառ հրովարտակ յԱմիրայէն Եգիպտոսի՝ իշխել 'ի վերայ իւրոցն անկախ 'ի Կաթուղիկոսէն եւ յարքայէ. եւ ետ կոչել զինքն Պատրիարգ Երուսաղէմի, եւ այս եղեւ. (1311)։ Հ. Մ. Զամչեան. Հատ. Գ. Երես 313։

Ատի սկսանի սովորութիւն Պատրիարգացն Երուսաղէմի դրոշմել կնիք կարմրագոյն 'ի կոնդակս և 'ի նամականիս իւրեանց, ըստ արժանի պատրիարքական պատուոյ և անուան. զի մինչեւ ցայն Կաթուղիկոսք Սսոյ զտիտղոսն Արքեպիսկոպոսի և եթ յօժարէին տալ նոցա։ Իսկ Սարգիս ընդ պատրիարգական անկախութեան՝ էառ եւ զայս իշխանութիւն, զի որպէս թագաւորացն Հայոց Կիլիկիոյ, նոյնպէս և Սուլթանաց Եգիպտոսի սովորութիւն լեալ էր դրոշմել կնիք կարմրագոյն 'ի հրովարտակս իւրեանց, որպէս յորոց ոմանք պահին ցարդ ասա 'ի վանս։ Զի թէպէտ և ոմանք առարկեն թէ՝ սովորութիւնն այն կաց մնաց յԵրուսաղէմ յաւուրց անտի Եղիազար Կաթուղիկոսի. սակայն Դաւիթ, Անդրէաս և Գրիգոր Պարոն Տէր կոչեցեալ Պատրիարգաց կարմրագոյն կնիքն դրոշմեալ 'ի թուղթս տեսանի ցարդ ասա 'ի վանս, որք երիցագոյն են ժամա-